ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«30» նոյեմբեր 2021թ. No 4693 - Ա

ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, 2014 թվականի մարտի 27-ի N 375-Ն որոշման մեջ փոփոխություններ և 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի N 1781-Ն որոշման 16-րդ կետի 1-ին ենթակետը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթի շրջանակներում ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում մատուցող առողջապահական կազմակերպությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի 1-ին կետով հաստատված ցանկում ընդգրկված առողջապահական կազմակերպություններին՝

ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման ծառայություններն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N1691-Ն որոշման հավելված 2-ի N1 ձևով նախատեսված պահանջներին համապատասխան:

3. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

հրամանը տեղադրել առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ